

Հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը հրապարակում է սույն հայտարարությունը փորձագետ ներգրավելու վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության աշխատանքներում փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը.

Աջակցության ցուցաբերում Վարչության կողմից համակարգվող ոլորտում ՏԻՄ-երի մեթոդական օգնության, խորհրդատվության աշխատանքներին, իրավական և մասնագիտական հսկողության կազմակերպման և անցկացման, ՏԻՄ-երի որոշումներին ընթացք տալու աշխատանքներին:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ Պայմանագիրը կնքվում է **մեկ տարի ժամկետով:**

Փորձագետի պարտականությունները՝ Ցուցաբերում է աջակցություն վարչության կողմից համակարգվող ոլորտում ՏԻՄ-երի մեթոդական օգնության, խորհրդատվության աշխատանքներին՝ իրենց սեփական, պետության պատվիրակած լիազորությունների և այլ հարցերով, մասնակցում է ՏԻՄ-երի որոշումներին ընթացք տալու աշխատանքներին, լիազոր մարմնի կողմից հաստատված ամենամյա ծրագրի համաձայն աջակցում է իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին, ապահովում է օժանդակություն դրանց կազմակերպմանը, կատարում է անհրաժեշտ ուսումնասիրություններ:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

- ունի բարձրագույն կրթություն՝ առնվազն բակալավրի կրթական աստիճան.
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Վարձատրության չափը՝ Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փառձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Ընտրությունը կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներով).

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են զանգահարել

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի (0285) 44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 26/12/2024թ.:

